ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 7-ից 8-ը Ֆրանսիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Վարդան Արամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

քաղաք Փարիզ, հունիսի 7-8 ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (այսուհետ՝ ՏՀԶԿ)

5. **Գործուղման նպատակը՝**

«Հարկման բազայի քայքայումը և շահույթի տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայի ստորագրում

6. **Ստորագրված կոնվենցիան՝**

2016 թվականի նոյեմբերի 24-ին ավելի քան 100 երկրներ, այդ թվում՝ ՏՀԶԿ երկրները, Մեծ քսանյակի երկրները, մի շարք զարգացած և զարգացող երկրներ, ավարտել են «Հարկման բազայի քայքայումը և շահույթի տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) շուրջ բանակցությունները: Կոնվենցիայի ստորագրումը նախատեսված էր 2017 թվականի հունիսի 7-ին, ք. Փարիզում՝ ՏՀԶԿ շաբաթվա ընթացքում: Կոնվենցիան բազմակողմ գործիք է, որը ներառում է հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղափոխումը (BEPS) ծրագրի գրեթե բոլոր

գործողությունների արդյունքները և թույլ է տալիս հնարավորինս դյուրին ճանապարհով բարեփոխել միջազգային հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը և կրճատել հարկումից խուսափելու հնարավորությունները: ՏՀԶԿ կողմից իրականացված գնահատականների համաձայն, միջազգային հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրության տարընթերցումների արդյունքում աշխարհում տարեկան չի հարկվում տնտեսական գործունեությունից ստացվելիք շուրջ 100-240 մլրդ ԱՄՆ դոլար եկամուտ, որը կազմում է համաշխարհային մակարդակով շահութահարկի գծով եկամուտների 4-10 տոկոսը:

Կոնվենցիայի ստորագրումը կարելի է համարել միջազգային հարկային հարաբերությունների պատմության նոր փուլ, որի արդյունքում կբացառվեն կրկնակի հարկման համաձայնագրերի շրջանակներում կրկնակի չհարկման դեպքերը, կվերանայվեն մշտական հաստատության ձևավորման կանոնները, ինչպես նաև որակապես նոր մակարդակի վարչարարական գործիքակազմից օգտվելու հնարավորություններ կընձեռնվեն կրկնակի հարկման համաձայնագրերի իմաստով իրավասու հանդիսացող մարմիններին: Կոնվենցիայի ստորագրումը ենթադրում է միանման մոտեցում կրկնակի հարկման համաձայնագրերի իմաստով գործընկեր հանդիսացող բոլոր երկրների հարկ վճարողների նկատմամբ, այդ թվում՝ վեճերի կարգավորման բարելավված համակարգ, իրավասու մարմինների միջև փոխադարձ համաձայնության ընթացկարգերի ավելի լայն շրջանակ, որն էլ կարևոր ազդակ կարող է հանդիսանալ հարկ վճարողների համար՝ հարկային համակարգի թափանցիկության և որոշակիության տեսանկյունից:

Կոնվենցիայի ստորագրումը հատկանշական է Հայաստանի Հանրապետության համար այն առումով, որ վերջինիս ստորագրմամբ Հայաստանի Հանրապետությունը ընդունեց միջազգային հարկային համագործակցության ոլորտում ներդրվելիք նոր խաղի կանոնները՝ ձեռք բերելով միջազգային հարկային հարաբերություններում հուսալի գործընկեր հանդիսացող երկրի կարգավիճակ: Կոնվենցիան ստորագրվել է 68 երկրների կողմից, մասնավորապես Ավստրիայի, Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Շվեդիայի, Կանադայի, Կիպրոսի, Գերմանիայի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի և այլ երկրների կողմից:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյան

8.Ստորագրությունը, ամսաթիվը